

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

### **ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գեներալին հարցերով զբաղվող մարզային մշտական հանձնաժողովի 23.06.2016թ. նիստի**

Նիստին մասնակցում էին՝

Ն.Մովսիսյան-ՀՀԱրագածոտնի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Գ. Դանիելյան- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս. Հովսեփյան- մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի անդամ

Ս. Թադևոսյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ

Ա. Մովսիսյան- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Ն. Դավթյան- մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Ս. Բարնջյան- «Հայ օգնության միություն» կազմակերպության Աշտարակի մասնաճյուղ, հանձնաժողովի անդամ՝ համաձայնությամբ

Հանձնաժողովի անդամ Աշտարակի քաղաքապետի տեղակալ Գ. Եղիազարյանի համաձայնությամբ նրա փոխարեն նիստին մասնակցել է Աշտարակի քաղաքապետարանի մշակույթի բաժնի մասնագետ Մ. Յաչյանը,

հանձնաժողովի անդամ Թալինի քաղաքապետ Ա. Արամյանի համաձայնությամբ նրա փոխարեն նիստին մասնակցել է Թալինի քաղաքապետի տեղակալ Խ. Տերտերյանը:

### **Օրակարգը՝**

- 1.«ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մարզային մշտական հանձնաժողովի» աշխատակարգի մասին / զեկուցող՝ Գ. Դանիելյան/
- 2.ՏԻՄ ընտրություններում կին թեկնածուների առաջադրման մասին /զեկուցող՝ Ս. Հովսեփյան, Ա. Մովսիսյան/
- 3.«Գենդերային հիմնախնդիրները համայնքներում» թեմայով դասընթացների կազմակերպման մասին / զեկուցող՝ Ն. Դավթյան/

Օրակարգի հարցի կապակցությամբ հանդես եկավ գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի քարտուղար տիկին Գ. Դանիելյանը: Հանձնաժողովի անդամները աշխատակարգի վերաբերյալ հավանություն փոխեցին ներկայացված աշխատակարգին:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ հանդես եկան պ-ն Ս.Հովսեփյանը և տ-ին Ա.Մովսիսյանը: Նշվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքներում գենդերային հավասարության ապահովման բնագավառում տարվող աշխատանքները պետք է լինեն կազմակերպված, հեղուկական, հիմնվեն միջոցառումների ու բնակչության հետ հանդիպումների գործընթացի վրա: Քննարկվող հարցի շուրջ տեղի ունեցավ քննարկումներ խնդրի լուծման արդյունավետության ապահովման հնարավորությունների շուրջ:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ տ-ին Ն.Դավթյանը ներկայացրեց «Գենդերային հիմնախնդիրները համայնքներում» թեմայով դասընթացների կազմակերպման նպատակով մշակված ժամանակացույցը:

Հանձնաժողովի նիստն ամփոփեց հանձնաժողովի նախագահ մարզպետի տեղակալ Ն. Մովսիսյանը:

### **Հանձնաժողովը որոշեց՝**

- Ս. Հովսեփյանին, Գ. Դանիելյանին՝ կազմակերպել հանդիպումներ համայնքների բնակչության հետ հանձնաժողովի անդամների կողմից, որոնց

ընթացքում կպարզարանվեն տեղական ինքնակառավարման մարմիններում կին թեկնածուների առաջադրման հետ կապված հարցեր, կկարևորեն այդ գործընթացի նշանակությունը:

-- Հանձնարարել հանձնաժողովի անդամներին՝ ապահովել անհրաժեշտ համագործակցություն նիստի օրակարգում ընդգրկված հարցերի կատարման համար

-Գ. Դանիելյանին՝ քննարկումների արդյունքում ի հայտ եկած առաջարկություններն ամփոփել և հանձնաժողովի անդամների միջոցով կազմակերպել դրանց իրականացման գործընթացը:

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Մովսիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ. Դանիելյան